

րելի՞ է ստուգել կտախն ժամանակն իր հիւսուածներու կազմութենէն. թէ զգալի տարբերութիւն մը կ'ա՞յ արդեօք ժիթ դա՞րու սկիզբէն մինչեւ 1880ի գոյներուն ու հիմայ՝ մեր օրերը շինուածներուն մէջ. և թէ պիտի կարենան արդեօք այդ ճա՞ռագայթները՝ զոնէ մասամբ, վեր հանել նախկին նկարիչներու արուեստին գազտ-նիբը:

Եթէ Fogg թանգարանի փորձերը ուրիշ արդիւնք ալ չունենային բայց եթէ գէթ յայտնել վերածնունդի նկարի մը ու

ի դարու նկարի մը տարբերութիւնը, արդէն իսկ ծառայութիւնը մեծապէս գնա՞հատելի պիտի ըլլար: Բայց անոնց արժէքը շատ աւելի է, քանի որ մեզի շատ մը կարելիութիւններ յայտնեցին զոր նըկարչութիւնը պիտի օգտագործէ: Ճառագայթագրութիւնը անկարելի է որ կարենայ գեղեցկագիտական դատաստանին տեղը բռնել. բայց շատ պիտի նպաստէ ստանալու այն ծանօթութիւնները՝ որոնց վըրայ այդ դատաստանը կը հիմնուի:

* * *

ԱՅԼԵԼԻՆԻՆԻ

ՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԿՕՄՊՕԶԻՏՈՐՆԵՐ

(20-րդ դար)

Բ Ա Գ Ո Յ

(Շարունակութիւն տես Բազմազէպ, 1926 էջ 367)

ՀԱՅ ԵՒ ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼՆ ԱՆՏՅՈՒ ՄԱՅԻԼԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Բ.

Հայ և օտար մամուլը տարիներ ընթացքում տեւել է Անտ. Մայիլեանի գործունէութեան և նրա աշխատանքների մասին մի շարք գնահատականներ, որոնցից առաջ ենք բերում հետեւեալները միայն.

1. «Бакинские Эхо», 1908 №. Դեկտ. 31.

«... Հանգուցեալ Քր. Կարա-Մուրզայից յետոյ խմբական կազմակերպական գործն աւելի լայն ծաւալ է ստանում. հռահիւոն պիտեմք 17 տարուց յետոյ թողնում է իր ետեկց յաշորդներ, որոնցից մէկն է և Անտոն Մայիլեանը... պիտի եկատեմ, որ Ա. Մայիլեանն օժտւած է խմբապետական և երաժշտական ընդունակութիւններով. բացի այդ նա աչքի է ընկնում իր անսպառ ջանասիրութեամբ և մեծ սիրով դէպի իր արւեստը և այդ իրաւունք է տալիս ինձ հաւատալու, որ նա հայ ժողովրդի մէջ քառաձայն երգի տարածման գործում մեծ դեր պիտի խաղայ...»:

Պ. Կ. Մուրզա

2. «Յուշարար», 1908, N. 10

«... Մի բան, որ կազմում էր երեկոյթի «միլիը», դա երգ. ուսուցիչ Պ. Մայիլեանի գրած մանկական օպէրան էր՝ «Գիւլնազ տատի հէթիաթը»: Դա մի նորութիւն է մեզանում և պէտք է տեսել՝ հետաքրքրական նորութիւն, ուստի մենք կը ցանկանայինք մի փոքր կանգ առնել այդ

երևոյթի վրայ: Եթէ չենք սխալուում, մեզանում այդ ուղղութիւնամբ նոյն իսկ փորձեր էլ չեն եղել, և դա զարմանալի էլ չէ, քանի որ մեր դպրոցները փակ լինելով մենք, հայերս, անշատ-ւած էինք մեր երեխաներից... Պ. Ա. Մայիլեանի այդ փորձը զալիս է մեզ ապացուցեցու, որ չուտով մենք զուցէ կ'ունենանք հարուստ երաժշտական զարդարանք:

... Այնքան յաջող էին խաղում փոքրիկ երեխաները, որ ստիպւած եղան կրկնել երեք անգամ ցերեկով և երեք չորս անգամ երեկոյան ներկայացման ժամանակ. և այդ պահանջում էին ոչ թէ փոքրիկները, այլ ուսուցչական կազմը, ներկայ եղող ծնողները, հոգաբարձուները, այնքան քաղցրահնչուն և գիրքմբռնելի էին երգերը, այնքան զուրկան էր երաժշտութիւնը, որն արտայայտութիւն էր մեր ժողովրդական ոգու ամենազգայուն հնչիւնների: Ամեն ինչ մանկական էր և սէրը և նրա արտայայտութիւնը — անմեղ թոթովանքներ թռռների կողմից: Բժ. Ար. Մնացականեան

3. «Մարտական... 1925, Մեպտ. 10, N. 207

Լաւ գործի սկիզբը — երաժիշտ Ա. Մայիլեանը, այս երկու ամառ է, մեզ մօտ Ղարաքիլիսում շնորհալի մանկական համերգներ ու մանկական օպերաներ էր տալիս: Նրա սովորեցրած երգերն ու պարերը այնուհետև դառնում են մեր մանուկների սեփականութիւն, որոնք մի-մեանցից սովորելով՝ տարածում են միւս շրջաններն ու գիւղերը: Այս ամառ ընկ. Մայիլեանը բացի դրանից զբաղւել և սկիզբի է դրել նաև մի այլ լաւ ու, կարելի է ասել, մեծ գործի:

Ինչպէս երևում է, մեր նոր կարգերի հետեանք զպրոցական նոր ծրագիրները, աշխատանքի սկզբունքն ու կօմպլէքս սիստէմը շատ է հետաքրքրում նրան. նա փորձեր է անում կօմպլէքսի ենթարկել երգն ու նկարը և այնպէս ձուլել իրար հետ, որ դիտողական, ութթմիկ և մոտորական շնորհքները միաժամանակ և միաւորւած լինեն: Դա ունի շատ խոշոր և էական նշանակութիւն յատկապէս մեր դպրոցական կեանքում, որովհետև, ճիշտ է, մեր նոր ծրագրում զեղարուեստը մտնում է, բայց դժբախտաբար մենք չունենք համապատասխան ուժեր և դաս-սիրարկութեան այդ կողմը մեզնում համարեա մնում է երեսի վրայ: Ու ընկ. Մայիլեանն իր նոր աշխատանքով զալիս է մեծ ծառայութիւն մատուցանելու, երբ ուսուցչի անցած կօմպլէքսը երգի ու նկարի միջոցով աւելի է իւրացւում և զեղարուեստի տեսակէտից էլ երեխաները դաս-սիրարկւում են:

Ողջունելի է ընկ. Մայիլեանի այս գործը մանաւանդ այն տեսակէտից, որ երբ ամբողջ դասարանով երգում ու նկարում են նոյն բանը, դա զարգացնում ու ամրացնում է կօլլէկտիւ զգացմունքը, որ մեծ նշանակութիւն ունի մանուկների ապագայ աշխատանքների համար:

Անշուշտ այս գործը, իբրև նոր գործ, ունի իր թերի կողմերը, բայց ի հարկէ հետզհետէ կը կատարելագործւի և կը հասնի ցանկալի նպատակին: Այս օրերս ընկ. Մայիլեանի ցուցադրած փորձնական պարապմունքները և բանախօսութիւնը շատ մեծ բան է խոստանում:

Մանկալ Շմաւոն

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՄ ԱՆՑԵԱԼԻՑ

•

Ես դեռ ուսանող թիֆլիսի երաժշտական դպրոցի, 1900 թ.ից համերգներ էի կազմակերպում թիֆլիսի գանազան փողը թատրոններում ու արարածանեւում: Միաժամանակ մասնակցելով Գրիտատփոր Վարա-Մուրզայի մի շարք համերգներին՝ սաստիկ ցանկութիւն ունէի նրա նման ընկնել գաւառները և կազմակերպել ժողովրդական համերգներ:

Առանձնապէս ինձ գրաւում էր էն հանգամանքը, որ ես ընկնէի այնպիսի մի վայր, ուր դեռ չէին հնչել քառաձայն երգի աւաչները, ուր հայ ժողովրդական

երգը դեռ մշակւած ձևով չէր թնդացել բեմից, և վերջապէս, ուր դեռ չէր եղել փրիստ. Կարա-Մուրզան:

Առաջին գաւառական համերգը կազմակերպեցի 1903 թ. Դեկտ. 31-ին Շուլաւէրում:

Թիֆլիսի վերցրի իմ ընտիր երգիչներէց 20 հոգի որոնց թւում այն ժամանակայ լաւագոյն երգիչներ՝ Սարգիս Մուրադեան (այժմ երաժշտագէտ), Ա. Թակոբջանեան, Պար. Լեոնեան և ուրիշներ: Նրանցով չբաւականանալով տեղացի-ներէից հաւաքեցի դարձեալ երգիչներ ու այդպիսով խմբի թիւը հասցրի մօտ 40-ի:

Առաջին համերգը տւինք Դեկտ. 31 թ. գիշերը ժող. տանը: Պէտք էր տեսնել գիւղացիների և հանդիսականների էն հոսանքը, որ սկսել էր էդ գիշերը: Բաւական է յիշել, որ շատերը դրամի փոխարէն բերել էին հաւ և ձու:

Երազգիրը կրկնում էր մի քանի անգամ և ծարաւի ժողովուրդը խանդավառ ոգևորութեամբ ընդունում էր մեր այդ պատմական համերգը:

Միւս օրը տեղի ուսուցիչների և հասարակական գործիչների ու Արամ Դաւլա-բեանի աջակցութեամբ կազմակերպեցին մի հսկայական հրաժեշտի ճաշկերոյթ, ուր ճառերի և ուրախական բացականչութիւնների հետ հնչում էր առաջին բազմամարդ քառամայն խմբի աւաշները (ակօրդները):

Երբ Թիֆլիս վերադարձանք համերգից մնացած 20 բուրլով մի ճաշկերոյթ կազմակերպեցի էն լաւ բարեկամ-երգիչների համար, որոնք իմ ներշնչմամբ էն ցուրտ ձմեռն եկան ինձ հետ, կուլտուրական մեծ գործի համար:

Ծանր ապրումներ

Խենթի պէս ներկելով երաժշտական ասպարէզին և ուսանելով և միաժա-մանակ գաւառներն ընկած համերգներ կազմակերպելով՝ ոչ մի վտանգի, նեղու-թեան ու ծանր օրերի առաջ կանգ չէի առնում: Գիտակցելով էդ կուլտուրական գործի վեհութիւնը, համարձակ տանում էի ամեն մի նեղութիւն:

Նոյնպիսի դրութիւն ստեղծեց Լուսայ և Ղարսի ջրջանում:

1904 թւի ամառն էր. անցել եմ Ղարս համերգի:

Քաղաքն ինձ անծանօթ, ես՝ քաղաքին:

Հրաւէր եմ փակցնում պատերին, որ «Թիֆլիսից եկել է ուսանող-երա-ժիշտ Անտ. Մայիլեանը՝ երգեցիկ խումբ կազմելու»:

Հաւաքեցին 15 հոգի. դա ինձ բաւարարութիւն չի տւեց: Փորձեր չարի մինչև մի պատկանելի խումբ կազմելը:

Անցաւ մի շաբաթ:

Գործս անյաջող էր: Փորձեր չէի անում:

Սաստիկ վիրտ պատեց ինձ. մնացի առանց կոպէլի. հիւրանոցի ծախքը պիտի տայի, թէև ինքս քաղցած:

Մի օր նստած ամառային այգում, խիստ ընկած տրամադրութեամբ, մտա-ծում եմ ինձ մօտ եղած զգեստներս ծախեմ ու յետ գնամ Թիֆլիս, միւս կողմից սաստիկ տանջում է ինձ փնքնասիրութիւնս: Եւ, առանց համերգ տալու վերա-դառնամ. լաւ էր մեռնելի, մտածում էի ես, քան թոյլ տայի ինձ այդ բանը:

Մի ազնիւ երիտասարդ, Երւանդ Փալանջեան, որ երգի սիրահար էր և անհամբեր սպասում էր համերգին, հետաքրքրեց իմ ծանր մտածմունքներով և մի քանի տաք խօսքերով ներշնչելով ինձ, չգիտեմ որ տեղից որ էր դրամ բերեց և զրեց՝ բոխ մէջ:

— Մի յուսահատւէ՛ք, ասաց նա: չէ՛ որ մեր ժողովուրդը դեռ ձեզ չի հա-
նաչում:

Ես և ամաչեցի և ուրախացայ եղ զարմանալի վերաբերմունքից, իսկ նրա
ուժը բուրլին ինձ համար ինքնին մեծ աջակցութիւն էր:

— Պէ՛տք էր գործի անցնել, վճռեցի ես, և ինձ պատեց մի զարմանալի հա-
մարձակութիւն:

Ես ի՛նչ եմ անում: Ուռնաց քաշւելու մտնում եմ ամեն մի հայ ընտանիք
և յորդորում, որ նրանց զաւակները զան մասնակցելու հայ ժողովրդական երգերի
մեծ համերգին:

Եւ այսպէս տնէ-տուն ընկնելով՝ ինձ յաջողեց հաւաքել մի պատկառելի
թիւ: Այս գործում պակաս աջակցութիւն չտեց նաև իմ լաւ քարեկամ Յակ,
Յովհաննիսեանը:

Առաջին իսկ փորձին հաւաքեցին մօտ 50 հոգի. իսկ մի քանի օրից Ժրգիշ-
ների թիւը հասաւ մօտ 120 հոգու:

Երանր ապրումներ ու ամենաքաղցր յիշողութիւններ, որ ստացայ հայ ժո-
ղովրդից՝ դա Ղարսումն էր:

Թէև կառավարութիւնը խոչընդոտ էր հանդիսանում և ամեն կերպ աշխա-
տում էր խանգարել համերգս, բայց և բռնապէս իմ երկու համերգներն ամառային
Թատրոնում գրաւեցին ծայրէ ի ծայր լիք հասարակութիւն, իսկ շատերը տանիքը
բարձրացած լսում էին համերգը:

Օ, որքան քաղցր ու թանկ էին է՛ն ծափերը, է՛ն թարմ ծաղիկները, է՛ն
նւէրները...

Պակաս յաջողութիւն չունեցան նաև թիֆլիսից եկած իմ ընկեր երգիչները
Ս. Մուրադեան և Ա. Յակոբջանեան:

Համերգից յետոյ

Համերգից յետոյ դուրս ենք գալիս Թատրոնից տուն գնալու, — և ի՛նչ տեսայ:
Ղարսի ամառային այգու մի ծայրից միւսը բացւած է մի հսկայական սե-
ղան, Թատրոնից դուրս գալուն պէս արեւելեան երաժիշտների նւազը միախառնւած
կեցցէների հետ դիմաւորում են մեզ:

Էդ գիշեր ես մի քիչ հիւանդացայ: Սակայն լուսարացին երիտասարդութիւնը
զուղուկի և սագանդարի ուղեկցութեամբ, բարձրացրեց ինձ ձեռքերի վրայ ու
հասցրեց հիւրանոց իմ սենեակը:

Այդպիսի խանդավառ ոգևորութիւն առաջ բերեց ժողովրդի մէջ մեր քառա-
ձայն երգեցողութիւնը:

Այնուհետև էլ աւելի ոգևորւած անցնում եմ Ալէքսանդրապօլ, կաղզւանի
շրջանը և ամեն տեղ նոյնպիսի քաջալերութեան հանդիպում, քանի որ Ղարսից
յետոյ իմ համերգի մասին արդէն խօսւում էր ամեն տեղ:

Անշուշտ շատ ու շատ քաղցր են տասնեակ տարիների համերգներից յիշո-
ղութիւնները, սակայն ես այստեղ ընդհատում եմ յիշողութիւններս և մի քանի
խօսք էլ նւիրում իմ միջազգային — ինտէրնացիօնալ համերգներս, որոնք իր ժա-
մանակին խոշոր դեր են կատարել:

Բաց ի իմ ուսական համերգներից և Պարսկաստանում հայ — պարսկական
համերգներից՝ կազմակերպել եմ Վրաստանում հայ-վրացական համերգներ, որն
ազգերի մերձեցման խնդրում անշուշտ ունէր իր նշանակութիւնը:

Յիշատակելի է մի փաստ։ Օր. 1919 թ. երբ ծագեց հայ-վրացական կոնֆլիկտը և երբ Յունաս. Ծ-ին վրաց շփոխմանները հալածանք սկսեցին՝ վրաստանում եղած հայերի դեմ, այդ ժամանակ ևս թիֆլիսի Բէրօզաշիլու գիժնազիայում կազմակերպեցին վրացիներից և հայերից երգեցիկ խումբ և նոյն զարոցի մեծ դահլիճում տւինք համերգ-երեկոյթը։

Բաւական է յիշել, որ այդ անմիտ ազգայնական կուռ ժամանակ վրացիներին երգել էի տալիս հայերէն, հայերին՝ վրացերէն։

Տիկ. Շարաին իր ճառի մէջ շեշտեց էդ հանգամանքը, թէ ինչպէս էդ երգեցիկ խումբը էս անմիտ ազգայնական կուռ յամին ի մի է ձուլում լեզուները և անխտր երկու ժողովուրդների մէջ սիրոյ ու խաղաղութեան երգեր հնչեցնելով՝ հանգստացնում է կիրքը։

Իմ մի շարք ինտէրնացիօնալ խմբերի մէջ նշանաւոր դարձաւ Բագուի բանւոր բանւորուհիների երգեցիկ խումբը, որ իր տեսակով առաջինն էր ամբողջ Ռուսաստանում։

Բալախանիի (Բագուի արւարձան) համերգին, որի մասնակցում էր մօտ 250 հոգի, պէտք էր տեսնել էն հազարաւոր բանւորներին, որ սպասում էին հերթին համերգը փսելու։ Համերգի ծրագիրն սկսեց առաւօտից մինչև երեկոյ, պարբերաբար կրկնելով ծրագիրը նոր-նոր հանդիսականների համար։

Այսպանը բաւական է գաղափար տալու համար էն հսկայ գործի մասին, էն ցնցող ապաւորութիւնների, որ ապրել ենք մենք էդ մասսայի ակիբներում։

Էդ օրը բանւորութիւնը նւիրում է ինձ դափնեայ պսակ և Բեթհոլէնի մեծագիր նկարը շրջանակում ծաղիկներով զարդարւած, որոնց ևս սրբութեամբ պահում էի մինչ տանկական արշաւանքը կովկաս։

Նշանակալից են նաև իմ կազմակերպած Թուրքերի մէջ առաջին քառաձայն խմբերը, մասնաւոր թրքուհիների երգեցիկ խումբը, որը կատարում է նաև հայերէն երգեր։

Մովորական բան է, երբ հայերը երգում են Թուրքերէն և այլ լեզուներով. բայց երբ թրքուհին է երգում հայերէն, սա մի յառաջադիմութիւն է կովկասի ազգերի մերձեցման խնդրում։

Գալով իմ մանկական համերգների և օպերաների՝ պիտի ասեմ, որ պակաս ոգևորութիւն և յիշողութիւններ չեն տւել էդ գողտրիկ կատարողները։ Նրանք էլ իմ յիշողութիւնների շարքում թողել են ջերմ ու պայծառ գծեր, իրենց թոթափիչ ու զնգուն հնչիւններով...։

Գեոտ էլի անհուն սիրով, ապագայի սիրուն հեռանկարներով, շատ ու շատ յիշողութիւններով ու ցաղցր զգացումներով ուզում եմ ամբարել իմ սիրտը, իմ միտքը, իմ հոգին...։

1926 թ. Սեպտ. 12.

Բագու

ԱՆՏ. ՄԱՅԻԼԵԱՆ

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

